ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԵՆԳԱՎԻԹ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ

ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ-43, տարածք 55

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ.
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՄՆՎԵՑ ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՔՍԱՆՈՒԹԻՆ

«ՎԱՐՁԱՏՈՒ» «ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՋԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԸ
իրավաբանական հասցե՝ ք.Իջևան, Մայիսի 28-ի փողոց, 4 շենք, վկայական՝ 03 Ա 215745, գրանցման համարը՝ 222.160.65745, ՀՎՀՀ՝ 07615815, ի դեմս տնօրեն *ԱՐՄԵՆՈՒՀԻ ԳԱՐՈՒՇԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ*
ծնված 15 նոյեմբերի 1970թվ.,
ID CARD 000817775, տրված 18 հունվարի 2013թվ., 038-ի կողմից,
հաշվառված՝ ք.Իջևան, Մյասնիկյան փողոց, թիվ 68/1 հասցեում

«ՎԱՐՁԱԿԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ , ի դեմս «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի
գտնվելու վայրը՝ ք.Երևան, Արշակունյաց 7, վկայական՝ 01 Բ 001184, հաշվառման համարը՝ 278.180.03555, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վարդան Հասրաթյանի, որի անունից համաձայն 29 սեպտեմբերի 2016թվ տրված թիվ ՎՀ/ԽԳ/5266-16 լիազորագրի հանդես է գալիս լիազորված անձ՝ *ՎԱՆԱՆԴ ԺԻՐԱՅՐԻ ՍԱՖԱՐՅԱՆԸ*
ծնված 01 հունվարի 1983թվ.,
ID CARD 004163770, տրված 04 հունիսի 2014թվ., 003-ի կողմից
հաշվառված ՝Գեղաքունիք, գյուղ Լուսակունք, 7 փողոց, 17 տուն հասցեում

այսուհետև, միասին «ԿՈՂՄԵՐ», ԿՆՔԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել 1.2.կետում նշված գույքը:

1.2. Վարձատուն պարտավորվում է Վարձակալին հանձնել *Տավուշի մարզ, ք.Իջևան, Մայիսի 28-ի փողոց, թիվ 4(չորս)* հասցեում գտնվող անշարժ գույքի *մի մասը*, որը համաձայն Ա/Ձ Արմեն Ակունցի կողմից 29 սեպտեմբերի 2016թվ տրված շինության հատակագծի բաղկացած է *76,67(յոթանասունվեց ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական) քմ* մակերեսից: Ամբողջ անշարժ գույքը բաղկացած է 436,6 քմ մակերեսով հողամսից, 391,52 քմ մակերեսով գրասենյակից; (հողամասի ծածկագիրը՝11-011-0115-0130, շինության ծածկագիրը՝ 11-001-0011-0130-001-000) այսուհետև՝ «Գույք»:

1.3. Գույքը պատկանում է Վարձատուին սեփականության իրավունքով, ինչը հաստատվում է հետևյալ փաստաթղթերով՝ ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի Կադաստրի պետական կոմիտեի Տավուշի տարածքային ստորաբաժանման կողմից _____ 18 սեպտեմբերի 2013թվ. տրված անշարժ գույքի *թիվ 18092013-11-0026*__սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականով:

1.4. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Գույքի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

1.5. Սույն պայմանագրի կնքման պահին այն ազատ է երրորդ անձանց իրավունքներից, գրանցված սահմանափակումներ չկան, համաձայն Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի «ԵՐԵՎԱՆ» տարածքային ստորաբաժանման, « Իջևան» սպասարկման գրասենյակի կողմից 30 սեպտեմբերի 2016թվ տրված անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ *No ՍՏ-30092016-11-0168* միասնական տեղեկանքի:

1.6. Վարձակալության հանձնված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. <u>Վարձատուն իրավունք ունի՝</u>

2.1.1. Վարձակալից պահանջել գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխան.

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը.

2.1.3. Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան:

2.2. <u>Վարձատուն պարտավոր է՝</u>

2.2.1. Գույքը վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.2.2. Գույքը վարձակալին հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով (տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն).

2.2.3 Իր հաշվին կատարել Գույքի հիմնական վերանորոգումը :

2.2.4..Վարձակալին նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին:

2.2.5 Իր հաշվին մուծել գույքի օգտագործման համար նախատեսված բոլոր անհրաժեշտ կոմունալ մուծումները (էլեկտրաէներգիա, ջուր, գազ, աղբահանություն և այլն):

2.3. <u>**Վարձակալն իրավունք ունի՝**</u>

2.3.1. Պահանջել Վարձատուից սույն պայմանագրի կետերում սահմանված ժամկետում և պայմաններին հանապատասխան իրեն տրամադրել Գույքը:

- Ենթավարձակալության տալ վարձակալությամբ վերցված գույքը վարձատուի գրավոր համաձայնությամբ:

2.3.2. Վարձատուից պահանջել իրեն տրամադրել Գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը.

2.3.3. Գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերությունները հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

2.3.3.1. Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը. կամ հատուցելու Գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.3.2. Վարձատուին նախապես տեղեկացնելով վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը.

2.3.3.3. Պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը. պայմանների խախտման դեպքում:

2.3.4. Պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, գույքի վիճակը վատթարացել է:

2.3.4.Վարձատուի կողմից սույն պայմանագրի 2.2.3. կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում՝

2.3.5.1. Կատարել սույն պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը և ՎԱՐՁԱՏՈՒՑ պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին:

2.3.5.2. Պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը.

2.3.5.3. Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները.

2.4. <u>Վարձակալը պարտավոր է՝</u>

2.4.1. Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:

2.4.2. Գույքը պահպանել պատշաճ վիճակում , իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել Գույքը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը:

3. ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

3.1.Վարձավճարի չափը կազմում է ամսեկան *180000 (հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ,* ներառյալ հարկերը և կոմունալ վճարումները:

3.2 Վարձակալը պարտավոր է վարձավճարը վճարել ոչ ուշ քան տվյալ ամսվա համար մինչ նույն ամսվա 30-ը (երեսունը):

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.

4.1 Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ,ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում Վարձատուին
պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

4.2 Վարձատուն պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի կողմից հայտնաբերվեին Գույքը զննելիս կամ Գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունն ստուգելիս:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Գույքի վարձակալության ժամկետն սկսվում է <u>երկու հազար տասնվեց թվականի հոկտեմբերի քսաներեքից և գործում է 2 (երկու) տարի ժամկետով:</u>

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

6.1 Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

6.2 Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով.

6.3 Էականորեն վատթարացել է գույքի վիճակը.

6.4 Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը և այլն. Խախտվել է պայմանագրով նախատեսված որևէ կետի պահանջը:

6.5 Սույն պայմանագիրը կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնել՝ լուծել պայմանագրի մյուս կողմին նախապես **մեկ ամիս առաջ գրավոր տեղյակ պահելով:**

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանի քննության:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը , քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը : Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Սույն պայմանագրի կնքման հետ կապված ծախսերը վճարում է **«ՎԱՐՁԱԿԱԼԸ»**

9.1 Սույն պայմանագրով կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից: Սույն պայմանագրին կից հավելվածները դրա անբաժանելի մասն են:

9.2 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկը պահվում է ՀՀ Երևան քաղաքի . Շենգավիթի տարածքի նոտարական գրասենյակի վարույթում, իսկ մնացած օրինակները տրվում են կողմերին անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում, սպասարկման գրասենյակում 30 **(երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում հաշվառման ենթարկելու համար :**

Պայմանագիրը ընթերցվեց կողմերի կողմից: Պայմանագրի բովանդակությունը բավարարում է կողմերի պահանջներին: Կողմերը հավաստիացնում են, որ պայմանագիրը մոլորության, խաբերության, կամ սպառնալիքի ազդեցության տակ չեն կնքում, և այն համապատասխանում է իրենց իրական մտադրություններին:

«ՎԱՐՉԱՏՈՒ» *«ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՋԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԲ*

ՏՆՕՐԵՆ .....

«ՎԱՐՉԱԿԱԼ» *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ի դեմս «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի*

ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ .....

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ.
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՎԵՑ ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՔՍԱՆՈՒԹԻՆ

Սույն պայմանագիրը վավերացված է իմ Հայաստանի Հանրապետության «ՇԵՆԳԱՎԻԹ» նոտարական տարածքի նոտար՝ ԱՆԱՀԻՏ ՄԻՆԱՍՅԱՆԻՍ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրողների ինքնությունը ստուգված է, գործունակությունը՝ պարզված, ինչպես նաև իրավաբանական անձի՝ նրա ներկայացուցչի լիազորությունները, անշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները ստուգված են:
Հայաստանի Հանրապետության քաղաքացիական Օրենսգրքի 611 (վեց հարյուր տասնմեկ) հոդվածին համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում, սպասարկման գրասենյակում:

Գրանցված է սեղմանամատյանում 11940
Գանձված է պետական տուրքը և ծառայության վճար, համաձայն Հայաստանի Հանրապետության «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների :
ՆՈՏԱՐ

Հավելված N 3
ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2011թ. հոկտեմբերի 20-ի N 284-Ն հրամանի

Էջ 1

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱԳԻԾ

ՏՐԱՄԱԴՐՎԱԾ Է ԳԺԴՀ Հայաստանի մասնաճյուղ ԻՆ
(Անուն, ազգանուն, (անվանումը))

Տավուշ (Մարզ) | ք. Իջևան (Համայնք) | Մայիսի 28-ի փողոց 4 (Հասցե)

ՄԱՍՇՏԱԲԸ՝ 1 : 100



1-ին հարկ
H=3.3
h=3.1
D=0.2
d=0.1

Շտրիխված մասը վարձակալությամբ տրամադրվող տարածք՝ 76.67 ք.մ.

Կատարող (Ստորագրություն) Արմեն Ակունց (Անուն, ազգանուն) 29.09.2016թ. (Ամիս, ամսաթիվ)

Որակավորման վկայական 0191 (Համարը) 29.05.2012թ. (Տրման ամիս, ամսաթիվը)

Իրավաբանական անձի 01Ա258139 (Պետական գրանցման համարը) Արմեն Ակունց ԱՁ (Անվանումը) (Ստորագրություն)

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «23» Հոկտեմբերի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ի դեմս «ՀՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ»

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Տավուշ, համայնք Իջևան ք. Մայիսի 28 փողոց 4

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի մասի վարձակալության պայմանագիր սեղ. թիվ 11940, 28.10.2016թ., Անշարժ գույքի մասի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին 18.10.2018թ. թիվ 11888 համաձայնագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ESTATE CADASTRE

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	11-001-0115-0130-001	Գրասենյակ	76.67 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը՝ մինչև 28.10.2019թ.:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Գայանե Մեժլումյան

գրանցված պաշտոնի՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

Նոտարական ակտի կոդ: 444-20181018-117-3121633
Նոտարական ակտի գաղտնագիր: PRH7HX

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ

ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ-43, տարածք 55

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ.
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՈՒԹ ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՏԱՍՆՈՒԹԻՆ

ՄԵՆՔ՝ «ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՋԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԸ
իրավաբանական հասցե՝ ք.Իջևան, Մայիսի 28-ի փողոց, 4 շենք, վկայական՝ 03 Ա 215745, գրանցման համարը՝ 222.160.65745, ՀՎՀՀ՝ 07615815, ի դեմս տնօրեն ԱՐՄԵՆՈՒՀԻ ԳԱՐՈՒՇԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ, ծնված 15 նոյեմբերի 1970թվ., ID CARD 000817775, տրված 18 հունվարի 2013թվ., 038-ի կողմից, հաշվառված՝ ք.Իջևան, Մյասնիկյան փողոց, թիվ 68/1 հասցեում

ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ , ի դեմս «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի»
գտնվելու վայրը՝ ք.Երևան, Արշակունյաց 7, վկայական՝ 01 Բ 001184, հաշվառման համարը՝ 278.180.03555, ի դեմս գլխավոր քարտուղար Գոհար Գրիգորյանի , որի անունից համաձայն 16 հոկտեմբերի 2018թվ տրված թիվ ԳԳ/5847-18 լիազորագրի հանդես է գալիս լիազորված անձ՝ ՎԱՆԱՆԴ ԺԻՐԱՅՐԻ ՍԱՖԱՐՅԱՆԸ , ծնված 01 հունվարի 1983թվ., ID CARD 004163770, տրված 04 հունիսի 2014թվ., 003-ի կողմից , հաշվառված ՝ Գեղարքունիք, գյուղ Լուսակունք, 7 փողոց, 17 տուն հասցեում,
այսուհետ , միասին <ԿՈՂՄԵՐ>, ԿՆՔԵՑԻՆՔ ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

1. Կողմերը որոշել են իրենց միջև երկու հազար տասնվեց թվականի հոկտեմբերի քսանութին կնքված ՀՀ Շենգավիթ նոտարական տարածքի նոտար Անահիտ Մինասյանի կողմից սեղանամատյանի 11940 համարով վավերացված Տավուշի մարզ, ք.Իջևան, Մայիսի 28-ի փողոց, թիվ 4(չորս) հասցեում գտնվող անշարժ գույքի մասի վարձակալության պայմանագրի 5-րդ կետում, կատարել բովանդակային փոփոխություն և շարադրել հետևյալ կերպ՝
< Գույքի վարձակալությանը գործում է մինչև 28.10.2019թվ (երկու հազար տասնինը թվականի հոկտեմբերի քսանութը) ժամկետով: > :

2. Սույն համաձայնագրի բոլոր լրացումները, փոփոխությունները, համաձայնագրի լուծումը կատարվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ, նոտարական վավերացվամբ, կամ սույն պայմանագրով չնախատեսված դեպքում կողմերն իրենց պարտականությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով, դատական կարգով:
3. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն իրավաբանական հավասարազոր ուժ: Դրանց միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է Հայաստանի Հանրապետության Երևան նոտարական տարածքի նոտարի մոտ պահվող օրինակին: Համաձայնագրի կողմերին տրվում է մեկական օրինակ :
4 «Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» օրենքի 24 հոդվածի համաձայն, պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են ներկայացման և հաշվառման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:
5. Համաձայնագիրը ընթերցվեց կողմերի կողմից: Համաձայնագրի բովանդակությունը բավարարում է կողմերի պահանջներին: Կողմերը հավաստիացնում են, որ համաձայնագիրը մոլորության, խաբերության, կամ սպառնալիքի ազդեցության տակ չեն կնքում, և այն համապատասխանում է իրենց իրական մտադրություններին և ուժի մեջ է մտնում կնքման պահից:
6. Կողմերն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում կեղծ

փաստաթղթեր ներկայացնելու արդյունքում միմյանց հասցված նյութական և բարոյական վնասի համար:
Պայմանագրում կատարված փոփոխությունը և Կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են սույն համաձայնագրով :

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՋԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

ՏՆՕՐԵՆ .....

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ , ի դեմս «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի»

ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ .....

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՈՒԹ ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՏԱՍՆՈՒԹԻՆ
Սույն համաձայնագիրը վավերացված է իմ Հայաստանի Հանրապետության «Երևան» նոտարական տարածքի նոտար՝ ԱՆԱՀԻՏ ՄԻՆԱՍՅԱՆԻՍ կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը ստուգված է, նրանց գործունակությունը՝ պարզված,
Գրանցված է սեղանամատյանում 11888.
Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:
Նոտար Անահիտ Լազարի Մինասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «2» Նոյեմբերի 2016 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ի դեմս «ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Տավուշ, համայնք Իջևան ք. Մայիսի 28-ի փողոց 4

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի մասի վարձակալության պայմանագիր սեղ. թիվ 11940, 28.10.2016թ.

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	**11-001-0115-0130-001**	**Գրասենյակ**	**76.67 ք.մ.**	**ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարձակալության իրավունքը տրամադրված է 2 /երկու/ տարի ժամկետով, ամսական ՝ 180 000 /հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ վարձավճարով:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Մարինե Մատինյան

Գբաղեցրած պաշտոնը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

ESTATE CADASTRE